ՑՈՒՑՈՒՄՆԵՐ
9-րդ դասարանի աշակերտների և ուսուցիչների համար

1. Պատասխանների ձևաթղթի լրացման կարգը

Քննության ընթացքում առաջադրանքներին պատասխանելու համար շրջանավարտը պետք է լրացնի պատասխանների ձևաթուղթ, որի ճիշտ լրացումից է նաև կախված աշակերտի քննական արդյունքը:



Պատասխանների ձևաթղթում ընտրովի պատասխանով յուրաքանչյուր առաջադրանքի համարի ներքևի մասում կա չորս վանդակ: Տրված առաջադրանքի ճիշտ պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է տվյալ պատասխանի համարին համապատասխանող վանդակում գրառել «X» նշանը: Օրինակ՝

Կարճ պատասխան պահանջող առաջադրանքների (ենթաառաջադրանքների) պատասխանների գրառման համար պատասխանների ձևաթղթում նախատեսված են համապատասխան տեղեր:

Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքները պետք է կատարել թեստ-գրքույկի համապատասխան տեղում (չեն անցկացվում պատասխանների ձևաթուղթ):

Աշակերտն ունի սխալ պատասխանն ուղղելու 3 հնարավորություն, որից 2-ը՝ ընտրովի պատասխանով, 1-ը՝ կարճ պատասխան պահանջող առաջադրանքների համար: Եթե անհրաժեշտ է փոխել սխալ նշված պատասխանը, ապա պատասխանների ձևաթղթի՝ սխալ նշված պատասխանները փոխելու տեղում անհրաժեշտ է նշել առաջադրանքի համարը և համապատասխան վանդակում գրառել «X» նշանը կամ գրել կարճ պատասխանը:

2. Գրավոր աշխատանքի գնահատման չափանիշները

Ընտրովի պատասխանով և կարճ պատասխան պահանջող առաջադրանքներից (ենթաառաջադրանքներից) յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Թեստերի ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքների (ենթաառաջադրանքների) գնահատման չափանիշները տրվում են ըստ առարկաների:

Ամփոփիչ վերջնական գնահատականը որոշվում է թեստի առաջադրանքներից աշակերտի վաստակած բոլոր միավորների գումարից (առավելագույնը 40 միավոր), որը համապատասխանեցվում է գնահատման 20 միավորանոց համակարգին՝ համաձայն հետևյալ սանդղակի.

Միավորներ	Գնահատական	Միավորներ	Գնահատական
0	1	22-23	11
1	2	24-25	12
2-3	3	26-27	13
4-5	4	28-29	14
6-7	5	30-31	15
8-9	6	32-33	16
10-11	7	34-35	17
12-14	8	36-37	18
15-18	9	38-39	19
19-21	10	40	20

3. Աշխատանքի համար հատկացվող ժամանակը

Քննական աշխատանքի կատարման համար հատկացվում է 120 րոպե:

Սիրելի՛ աշակերտ

Քննական թեստի առաջադրանքների կատարումը մեծ ուշադրություն է պահանջում: Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:

Առաջադրանքի պահանջը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է նախ ուշադիր կարդալ այն, ապա անցնել պատասխանի ընտրությանը կամ խնդրի լուծմանը:

Խելամի՛տ օգտագործեք ժամանակը: Թեստը լրացնելու համար սահմանափակ ժամանակ է տրվում, և, քանի որ առաջադրանքներն իրենց բնույթով տարբեր են ու կատարման համար շատ կամ քիչ ժամանակ պահանջող, ապա պետք է կարողանաք ձեր ժամանակը ճիշտ բաշխել: Եթե ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը դուք կարող եք օգտագործել սևագրության համար: Ընտրովի պատասխանով և կարճ պատասխան պահանջող առաջադրանքները կատարելուց հետո չմոռանա՛ք պատասխաններն ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում, իսկ ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքների կատարման համար թեստ-գրքույկի հատկացված տեղում պետք է մանրամասն ու հիմնավորված կատարել առաջադրանքի պահանջը:

Մաղթում ենք հաջողություն